



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«20» 04 2018թ.

No 06/3-1/20694-18

Ձեռք No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.04.2018թ.

թիվ Պ-17 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

Մինչև 01.01.2018թ. գործող՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Նույն օրենքի 13-րդ և 13¹-րդ հոդվածների համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս

համախառն եկամուտը նվազեցվում է սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների վրա կատարված ընթացիկ, սպասարկման և կապիտալած ծախսերի չափով:

01.01.2018թ.-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են շահութահարկ վճարողի կատարած՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով (01.01.2018թ.-ից՝ 1-5-րդ կետերով), ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված ծախսերը: Նույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են հիմնական միջոցների (այդ թվում՝ գործառնական վարձակալությամբ կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված) վրա կատարված ընթացիկ և կապիտալ բնույթի ծախսերը:

Հաշվի առնելով վերը նշված իրավական կարգավորումները, հայտնում ենք, որ ինչպես մինչև 01.01.2018թ., այնպես էլ 01.01.2018թ.-ից հետո հարկվող շահույթը որոշելու նպատակով համախառն եկամտից ենթակա են նվազեցման միայն սեփականության իրավունքով հարկատուին պատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ վերցված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը: Հարկ վճարողին սեփականության իրավունքով չպատկանող կամ վարձակալությամբ (այդ թվում՝ լիզինգով) կամ անհատույց օգտագործմամբ չվերցված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը համախառն եկամտից ենթակա չեն նվազեցման:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ